ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10 (15)

## ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-18-Ի ՀԵՐԹԱԿԱՆ (ՀԵՌԱՎԱՐ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ) ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **19 դեկտեմբերի 2020թ.**

Հիմք ընդունելով ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կառավարման խորհրդի աշխատակարգի 18-րդ և 19-րդ կետերը և հաշվի առնելով տեսչական մարմնում առկա հրատապ լուծում պահանջող հարցերը՝ տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ կառավարման խորհուրդ) հերթական նիստը որոշվեց անցկացնել հեռավար քվեարկությամբ:

Կառավարման խորհրդի հեռավար քվեարկությունը սկսվեց 2020 թվականի դեկտեմբերի 17-ին և ավարտվեց 2020 թվականի դեկտեմբերի 18-ին, ժամը 18.00-ին:

Քվեարկությանը մասնակցում էին՝

**Կառավարման խորհրդի նախագահ՝**

Վ. Դումանյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

**Կառավարման խորհրդի անդամներ՝**

Ա. Ասոյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ա. Ավանեսյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ք. Գրիգորյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ա. Հայրապետյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Բ. Փափազյան - «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ

Ս. Ալոյան - «Դասարան» կրթական ծրագրի հիմնադիր նախագահ

Ա. Բախշյան - «Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպության նախագահի կրթության հարցերով խորհրդական

Ա. Գասպարյան - «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի հանրային համագործակցության ղեկավարի պաշտոնակատար

## ՀԱՐՑԵՐ

1. ՀՀ կրթության տեսչական մարմնի գործունեության 2021 թվականի տարեկան ծրագրի հաստատում:
2. ՀՀ կրթության տեսչական մարմնի 2019-2020 թվականների 1-3-րդ եռամսյակների կատարողականների գնահատման արդյունքների համեմատական վերլուծության ներկայացում:
3. ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի կողմից 2020 թվականի 1-ին կիսամյակում իրականացված աշխատանքների, բացահայտված ռիսկերի, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկների հաշվետվության ներկայացում:

Քվեարկության համապատասխան նյութերը ուղարկվել են կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին: Քվեարկությունը կայացել է:

**Քվեարկության արդյունքում՝**

1. Վ. Դումանյանը 1-ին, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
2. Ա. Ասոյանը 1-ին հարցին քվերակել է «կողմ»՝ պայմանով, որ առաջարկված լրացումները տեղ կգտնեն ծրագրում, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
3. Ա. Ավանեսյանը 1-ին, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
4. Ք. Գրիգորյանը 1-ին, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
5. Ա. Հայրապետյանը 1-ին, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
6. Ս. Ալոյանը 1-ին, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
7. Բ. Փափազյանը 1-ին, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկել է «կողմ»,
8. Ա. Բախշյանը 1-ին և 3-րդ հարցերին «դեմ» է քվեարկել, 2-րդ հարցի վերաբերյալ առաջարկել է առավել մանրամասն քննարկում կազմակերպել,
9. Ա. Գասպարյանը 1-ին, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկել է «կողմ»:

**Այսպիսով, տեսչական մարմնի կառավարման խորհրդի հեռավար նիստին մասնակցած 9 անդամներից 8-ը օրակարգի բոլոր 3 հարցերին քվեարկել են «կողմ»:**

**Այսպիսով, տեսչական մարմնի կառավարման խորհրդի հեռավար նիստին մասնակցած 9 անդամներից 8-ը օրակարգի բոլոր 3 հարցերին քվեարկել են «կողմ»:**

**Ա.Բախշյանն օրակարգի 1-ին և 3-րդ հարցերին քվեարկել է «դեմ», 2-րդ հարցի վերաբերյալ առաջարկել մանրամասն քննարկում կազմակերպել:**

**Ա.Ասոյանը օրակարգի 1-ին հարցին քվեարկել է կողմ՝ պայմանով, որ ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների համակարգման գրասենյակի առաջարկությունները տեղ գտնեն «ՀՀ կրթության տեսչական մարմնի գործունեության 2021 թվականի տարեկան ծրագրում»:**

**Տեսչական մարմինը ներկայացված վերոգրյալ առաջարկությունները ներառել է փաստաթղթի վերջնական տարբերակում:**

**Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո կառավարման խորհուրդը որոշեց՝**

1. Հաստատել ՀՀ կրթության տեսչական մարմնի գործունեության 2021 թվականի տարեկան ծրագիրը:
2. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի 2019-2020 թվականների 1-3-րդ եռամսյակների կատարողականների գնահատման արդյունքների համեմատական վերլուծությանը:
3. Հավանություն տալ ՀՀ կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի կողմից 2020 թվականի 1-ին կիսամյակում իրականացված աշխատանքների, բացահայտված ռիսկերի, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված առաջարկների հաշվետվությանը:

**Կառավարման խորհրդի նախագահ՝**

_____ **Վ. Դումանյան**

Ստորագրություն

**Կառավարման խորհրդի քարտուղար՝**

_____ **Ա. Գևորգյան**

Ստորագրություն